

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

01.03.2017թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ.Մուրադյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն.Մուշեղյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ.Մարկոսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան /

Որոշեցին՝

հաստատել «2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը»՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների անվանագերծված տվյալների բազաները ՀՀ առողջապահության նախարարության ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2016 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2016 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ներկայացված ծրագրերի:

/Անհատական/

03.04.2017թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Գ.Մարտիրոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն.Բաղդասարյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Մ. Խաչատրյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջին կարգի մասնագետ Ս.Մովսիսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա.Առուշանյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը:

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի թիվ 172-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն նոտարի գործունեության մասին» Ձև թիվ 1-նոտար պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 172-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

/Անհատական/

Լսեցին՝

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. «Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2017 թվականի փետրվարի 27-ից մարտի 3-ը «Ազգային հաշիվների կազմման հարցերով» սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն.Ասրվաձապուրովա, Մ.Խաչատրյան, Ս.Մովսիսյան/

4.2 «Հաղորդում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2017 թվականի մարտի 12-ից 17-ը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 48-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ»:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

4.3 «Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2017 թվականի մարտի 12-ից 17-ը Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ վիճակագրության համար» խորագրով միջազգային գիտաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա. Առուշանյան, Ռ. Պեդրոսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/